

ԿԱՐԱՊԵՏ (մհս.) ՄԲԿ. ԽԱՉԻԿ ՆԻԱՉԵԱՆ, ԿԱԼԿԱԹԱՅԻ.— Մբ. Ձու. Ս. Յակոբի մէջ Գաբրիէլ պտրք.էն: 1821ին կ'օժանդակէ Հնդկաց Նւ. Աբրահամ վրդ.ի, որուն քարտուղարն էր: 1822 թուական իր գրած նամակէն կը հասկցուի որ՝ յանուն Ս. Յակոբի վանքին նպաստներ հաւաքելով Հնդկաստանի մէջ զրկած է Ս. Յակոբ: Նոյն նամակով տեղեկութիւններ կուտայ նաեւ Հնդկաստանի ազգայնոց վրայ եւ կը ծանուցանէ Կալկաթայի Մարդասիրական Գեղարարի հիմնարկութիւնը եւ իր վերագարձն Հնդկաստան, ևլն.:

ԿԱՐԱՊԵՏ ՄԲԿ. ՊԱՂՏԱՏՅԻ.— Քարտուղար ՊԿ. Կեսարացի Կարապետի (Կրպօ). Կարապետ սրկ. ՌձՆԱ. (=1692) թուին ուխտաւորութեամբ բնակած է Ս. Յակոբի վանքը, և այդ առթիւ հաւաքածոյի մը երկու մասերն՝ Ջուղայեցի Սիմէոն վրդ.ի Քերականոքիւնը և Քերականիս թագաւորիս հարց-պատասխանիով ընդօրինակած է Ս. Յակոբի վանքին մէջ. իսկ ձեռագրին միւսը մասերը ընդօրինակած է այլուր: (CMA. էջ 142):

ԿԱՐԱՊԵՏ (մհս.) ՍԱՐՐԱՅԵԱՆ, ԵԻԴՈԿԻԱՅԻ.— 1841 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. եւ այդ առթիւ Բեթղէհէմի Ս. Ծննդեան եկեղեցիին համար կը նուիրէ երկհատոր հին տիպ ձառոց գիրք մը. (տպ. Արապեան Կ. Պոլիս, 1801):

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅԻ.— Մբ. ՁԻԱ. (= 1272) թուական, Իգնատիոս վրդ.ի Մեկն. Դուկասու Աւեստանին ձեռագիրը կը պարունակէ հետեւեալ ինքնագիր յուշագրութիւնը. «ես նուաստ կարապետ վրդ.ս որ գնեցի զսբ. փրկիչ եկեղեցին որ է ի Ս. քաղաքս երօղմ. և է Ս. փրկիչն տեղիք չարչարանաց Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ. որ է սեղան վէմն որ գրքիստոս ի վերայ ձողեցին. և շինեցի վանք ըստ կարի իմում. դ. անգամ յեղիպտոս իջի և առի թուղթ հրամանի ի յարքայէն եղիպտոսի՝ համարձակ չըջիլ ի տեղիս տնօրինականաց Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Բազում վշտացայ ի հաւատացելոց եւ յանհաւատից...: յոյս ունիմ իսբ. Ածածին. որ փոխարէն տայ զիւր տեսն և զիւր միածին. ու սբ. Ածածինն. լինի ինձ հոգեբարձ. զի ես մարմնական տէր չունիմ. տվի զիմ գլըրքուկն սբ. փրկչին, որ է զուկասու մեկնիչն. մի՛ ոք իշխեսցէ հանեք